



**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

N 432 - Ա

01 նոյեմբերի 2019 թ.

**ԱԼԲԵՐՏ ԱՂԵԿՅԱՆԻՆ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ ԵՎ ԼԻԱՆԱ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանի 2019 թվականի նոյեմբերի 1-ի Ն/3491-2019 գեկուցագիրը կարգադրում եմ՝

1. Հատուկ առաջադրանքների և որակյալ աշխատանքների կատարման համար՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանին, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Համբարձում Համբարձումյանին և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի օգնական Լիանա Հովհաննիսյանին «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» (4111) տնտեսագիտական դասակարգման հոդվածի տնտեսված միջոցների հաշվին պարգևատրել մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումները:

01.11.2019

X 
 ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ


ՄԱՐՁՊԵՏ՝ Подписано: ANOSYAN GNEL 1710830069

Գ.ՍԱՆՈՍՅԱՆ
 ք.Գավառ